ՀՊՏՀ **2018-2022** ԹԹ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ՀՊՏՀ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	3
2.	ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀՊՏՀ ԴԻՐՔԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ.....	5
2.1	ՀՊՏՀ ՊՐՈՖԻԼԸ.....	5
2.2.	ՀՊՏՀ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ.....	7
2.3	ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ.....	10
2.4	ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻՑ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՀՊՏՀ-ՈՒՄ.....	13
2.5	ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ.....	14
2.6	ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻՑ ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ ԱՆՑՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ՀՊՏՀ-ՈՒՄ՝ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ.....	17
2.7	ԳԻՏՈՒԹՅՈՒՆ-ԿՐԹՈՒԹՅՈՒՆ-ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՀՊՏՀ-ՈՒՄ....	19
3	ՀՊՏՀ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԿԱ ՄՈԴԵԼԻ ԱՊԱՀՈՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԿՈՂՄԵՐԸ.....	21
4	2018-2022 ԹԹ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՀՊՏՀ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ.....	24
5	2018-2022 թթ ՀՊՏՀ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳԵՐԱԿԱ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	26
5.1	ՀՊՏՀ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԵՆԹԱՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	28
6	ՀՊՏՀ 2018-2022 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ.....	29
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	46

1. ՀՊՏՀ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՀՊՏՀ միջինաժամկետ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակումը խարսխվել է «ՀՊՏՀ 2016-2020 թթ զարգացման ռազմավարական ծրագրում», «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2022 թթ. ծրագրում», «Բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարություն և երկարաժամկետ զարգացման ծրագրի» նախագծում և «2018-2030 կրթության զարգացման պետական ծրագրի» նախագծում սահմանված ռազմավարական նպատակների ու զարգացման թիրախների վրա: Ռազմավարությունը մշակելիս հաշվի են առնվել նաև «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվող համակարգային փոփոխությունները, ինչպես նաև ՄԱԿ-ի «Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030» փաստաթղթի կայուն զարգացման չորրորդ նպատակով, «Կրթություն 2030. Դեպի ներառական և արդարացի որակյալ կրթություն ու կրթություն ողջ կյանքի ընթացքում բոլորի համար» Ինչհոնի հռչակագրով և Բոլոնիայի գործընթացի 2015 թ. Երևանի գագաթաժողովի արդյունքներով ընդունված հռչակագրով սահմանված հեռանկարային զարգացման թիրախները:

Ռազմավարության մշակման ընթացքում ուսումնասիրվել և հաշվի են առնվել նախորդող ժամանակահատվածում բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառում և տնտեսագիտական կրթության ծառայությունների շուկայում ՀՊՏՀ ձեռքբերումները, բացթողումները, դիմորդների մասնագիտական կողմնորոշման վերափոխումների, դիմորդների թվի սրընթաց կրճատման, ինչպես նաև տնտեսագիտական կրթության ծառայությունների շուկայում նոր՝ հիմնականում միջազգային բուհերի մուտք գործելու ու մրցակցության սրման ազդեցությամբ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին առաջադրվող մարտահրավերները:

Ռազմավարության մշակման շրջանակներում ռազմավարությունը մշակող խմբի կողմից իրականացվել է համակողմանի հետազոտություն՝ ուղղված ՀՀ բարձրագույն կրթության ծառայությունների շուկայում ընթացող փոփոխությունների նկարագրմանը,

առկա խնդիրների բացահայտմանը, ՀՊՏՀ գործունեության արդյունավետության գնահատմանը, գործունեության ռազմավարական նոր ուղղությունների վեր հանմանը և գործունեությանն նոր ձևերի ներդրման հնարավորությունների գնահատմանը:

Հետազոտություններն իրականացվել են հետևյալ ուղղություններով.

- տնտեսագիտական կրթության ծառայությունների շուկա,
- դիմորդների մասնագիտական կողմնորոշում,
- տնտեսագիտական կրթության նկատմամբ առկա և կանխատեսվող պահանջարկ,
- կրթության բովանդակություն և որակ,
- ՀՊՏՀ-աշխատաշուկա կապ,
- ՀՊՏՀ գործունեության և կազմակերպական կառուցվածքի արդյունավետություն,
- ՀՊՏՀ մատուցած կրթական ծառայությունների մատչելիություն և տարածական հասանելիություն,
- հետազոտություններ-կրթություն-տնտեսություն համագործակցություն,
- ՀՊՏՀ միջազգայնացման գործընթաց:

2. ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀՊՏՀ ԴԻՐՔԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ

2.1. ՀՊՏՀ պրոֆիլը

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը բարձրագույն կրթության երեք աստիճաններում «կառավարում», «տնտեսագիտություն» և «վիճակագրություն» որակավորմամբ կրթական ծրագրեր իրականացնող պետական և ինստիտուցիոնալ հավատարմագիր ունեցող բարձրագույն ուսումնական հաստատություն է:

Բարձրագույն կրթության առաջին աստիճանում (բակալավրիատ) ՀՊՏՀ-ն 2017-2018 ուսումնական տարում ընդունելություն է կազմակերպել բարձրագույն կրթության 11 մասնագիտությունների[12] կրթական ծրագրերով և ընդունելության քննությունների արդյունքներով ձևավորել 6 մասնագիտությունների[3] կրթական ծրագրերով կուրսեր առկա կրթաձևում և 5 մասնագիտությունների[4] կրթական ծրագրերով կուրսեր հեռակա կրթաձևում:

2018-2019 թթ ՀՊՏՀ-ում շարունակելու են գործել բարձրագույն կրթության մասնագիտությունների նախորդող ցանկում[5] ներառված հավելյալ 22 մասնագիտություններով իրականացվող կրթական ծրագրեր[6], որոնք 2019 թվականին ավարտվելուց հետո դադարելու են գործել:

Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում (մագիստրատուրա) ՀՊՏՀ-ն ընդունելություն է կազմակերպել բարձրագույն կրթության 37 մասնագիտությունների և

---

[1] Հաստատված ՀՀ կառավարության 2014 թ հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշմամբ:

[2] «Ֆինանսներ ըստ ոլորտի», «Կառավարում՝ ըստ ոլորտի», «Շուկայաբանություն՝ ըստ ոլորտի», «Հաշվապահական հաշվառում և հարկում՝ ըստ ոլորտի», «Տնտեսագիտություն», «Վիճակագրություն», «Սերվիս», «Զբոսաշրջություն», «Բնապահպանություն և բնօգտագործում», «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» և «Տեղեկատվական» համակարգեր:

[3] «Ֆինանսներ ըստ ոլորտի», «Կառավարում՝ ըստ ոլորտի», «Շուկայաբանություն՝ ըստ ոլորտի», «Հաշվապահական հաշվառում և հարկում՝ ըստ ոլորտի», «Տնտեսագիտություն» և «Վիճակագրություն»:

[4] «Ֆինանսներ ըստ ոլորտի», «Կառավարում՝ ըստ ոլորտի», «Շուկայաբանություն՝ ըստ ոլորտի», «Հաշվապահական հաշվառում և հարկում՝ ըստ ոլորտի» և «Տնտեսագիտություն»:

[5] Հաստատված ՀՀ կառավարության 2007թ օգոստոսի 30-ի N 1038-Ն որոշմամբ:

[6] Բակալավրիական կրթության 3-րդ և 4-րդ կուրսերում:

մասնագիտացումների կրթական ծրագրերով[7]: Ընդունելության արդյունքներով ձևավորվել են 23 մասնագիտությունների ու մասնագիտացումների կրթական ծրագրերի կուրսեր առկա կրթաձևում և 9 մասնագիտությունների և մասնագիտացումների կրթական ծրագրերի կուրսեր հեռակա կրթաձևում:

Բարձրագույն կրթության երրորդ աստիճանում (ասպիրանտուրա) ՀՊՏՀ-ն իրականացնում է 4 մասնագիտությունների (Ը.00.01, Ը.00.02, Ը.00.03, Ը.00.06) կրթական ծրագրեր:

2018 թվականին ՀՊՏՀ-ում բարձրագույն կրթության երեք աստիճաններում սովորել են 6872 ուսանողներ և ասպիրանտներ: Նրանցից 5528-ը սովորել են բարձրագույն կրթության առաջին աստիճանում (որից 69%-ը առկա և 31%-ը հեռակա կրթաձևերում), 1254-ը սովորել են բարձրագույն կրթության երկրորդ (որից 64%-ը առկա և 36%-ը հեռակա կրթաձևերում), իսկ 90-ը սովորել են բարձրագույն կրթության երրորդ աստիճանում (որից 31%-ը առկա և 69%-ը հեռակա կրթաձևերում):

ՀՊՏՀ-ում աշխատում են 637 հիմնական աշխատակից: Նրանցից 344-ը հիմնական հաստիքային պրոֆեսորադասախոսական համակազմի ներկայացուցիչներ են, 47-ը՝ վարչական և 211-ը՝ օժանդակ աշխատակիցները:

2016 թվականից ՀՊՏՀ-ն իրականացնում է նաև արհեստագործական և միջին մասնագիտական կրթության կրթական ծրագիր:

Առաջարկվող կրթական ծրագրերի տարեկան վարձի դրույքաչափով ՀՊՏՀ-ն «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտությունների կրթական ծառայությունների շուկայում բարձր գնային քաղաքականություն վարող բուհերից է: ՀՊՏՀ-ում ԲԿ յուրաքանչյուր մասնագիտության կրթական տեղի համար սահմանված վարձը 50.000 դրամով զիջում է ԵՊՀ-ի կողմից համանուն մասնագիտության համար սահմանած վարձի չափին, 50.000-250.000 դրամի չափով գերազանցում այլ պետական բուհերի կողմից համանուն մասնագիտության համար

[7] Թեպետ ՀՊՏՀ-ն բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում տիրապետում է առկա կրթաձևում լիցենզավորված 48 և հեռակա կրթաձևում լիցենզավորված 26 մասնագիտությունների և մասնագիտացումների կրթական ծրագրերի:

սահմանած վարձի չափին և մինչև 400.000 դրամ մասնավոր, հավատարմագրված բուհերի կողմից համանուն մասնագիտության համար սահմանած վարձի չափին[8]:

ՀՊՏՀ-ն տեղաբաշխված է մայրաքաղաք Երևանում և ունի երկու մասնաճյուղեր՝ Շիրակի մարզի Գյումրի և Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքներում:

2.2. ՀՊՏՀ տեսակարար կշիռը բարձրագույն ուսումնական հաստատությունների ներգրաված ուսանողների և կադրային ապահովվածության ցուցանիշներում

2016-2017 ուսումնական տարում Հայաստանի Հանրապետությունում գործունեություն են ծավալել 63 բարձրագույն ուսումնական հաստատություններ և 12 մասնաճյուղեր, որոնցից 25-ն ունեցել են պետական հավատարմագրում:

Բարձրագույն կրթության առաջին աստիճանում բակալավրի ծրագրով մասնագիտական կրթական ծրագրեր են իրականացրել 24 պետական բուհեր, 12 մասնաճյուղեր և 39 ոչ պետական բուհեր:

Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում մագիստրոսի ծրագրով մասնագիտական կրթական ծրագրեր են իրականացրել 34 պետական և ոչ պետական բուհեր ու 9 մասնաճյուղեր, ինչպես նաև 4 գիտական կազմակերպություններ:

2016-2017 ուսումնական տարում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորել է 81.648 ուսանող, որոնցից 72517-ը (88%-ը) սովորել է պետական, իսկ 9131-ը (12%-ը) ոչ պետական բուհերում և մասնաճյուղերում:

ՀՊՏՀ-ում 2016-2017 ուսումնական տարում սովորել են ՀՀ բոլոր բուհերում բարձրագույն կրթության երկու աստիճաններում սովորողների 8,3%-ը: ՀՊՏՀ բակալավրիատում սովորել է ՀՀ-ում բարձրագույն կրթության առաջին աստիճանում սովորողների (70738 ուսանող) 7.8%-ը և բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում սովորողների (10910 ուսանող) 11.4%-ը:

[8] Մանրամասն Հավելված 4:

ՀՊՏՀ ուսանողների տեսակարար կշիռը «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտություններով ՀՀ բոլոր բուհերում սովորողների թվում կազմել է 44%:

2016-2017 ուսումնական տարում ՀՊՏՀ բակալավրիատ ընդունվել է ՀՀ բոլոր բուհերի բակալավրիատ ընդունված ուսանողների 5%-ը, իսկ «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտություններով սովորողների 33%-ը[9]: Նույն տարում ՀՊՏՀ-ին բաժին է ընկել «տնտեսագիտություն» ու «գործարարություն և վարչարարություն» ենթաոլորտների մասնագիտություններով հատկացված տեղերի 25%-ը[10]:

2013-2017 թվականներին «տնտեսագիտություն», «գործարարություն և վարչարարություն» ենթաոլորտների մասնագիտություններով բակալավրիատ ընդունվածների թվում ՀՊՏՀ ընդունված ուսանողների տեսակարար կշիռը տատանվել է 25-33%-ի միջակայքում, իսկ բարձրագույն կրթության երկու աստիճաններում նշված մասնագիտություններով սովորողների թվում ՀՊՏՀ ուսանողների տեսակարար կշիռը տատանվել է 42-48%-ի միջակայքում[11]: Այս շեղումը հիմնականում պայմանավորված է բարձրագույն կրթության այլ մասնագիտություններից և այլ բուհերից ՀՊՏՀ մագիստրոսական կրթական ծրագրեր ընտրած ուսանողների համեմատաբար մեծ տեսակարար կշռով[12]:

ՀՀ բարձրագույն կրթության առաջին աստիճանում բակալավրի կրթական ծրագրերի մասնակցող ուսանողների 86%-ը սովորել է վճարովի, իսկ 14%-ը՝ անվճար հիմունքներով[13]: ՀՊՏՀ-ում բակալավրիատի ուսանողների 93.5%-ն է սովորել վճարովի և 6.5%-ը անվճար հիմունքներով:

Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում մագիստրոսի կրթական ծրագրերի մասնակցող ուսանողների թիվը կազմել է 10.910, որոնցից 68%-ը սովորել է

[9] Ընդունելության երկրորդ փուլի արդյունքներով 36%-ը:
[10] Մանրամասն Հավելված 3:
[11] Մանրամասն Հավելվածներ 1 և 2:
[12] Առանձին մասնագիտությունների և մասնագիտացումների համալրման ցուցանիշները բերված են Հավելված 11-ում:
[13] Պետության կողմից ուսման վարձի 100% փոխհատուցում ուսանողական նպաստի ձևով

վճարովի, իսկ 32%-ը անվճար հիմունքներով: ՀՊՏՀ-ում մագիստրատուրայի ուսանողների 73%-ը սովորել է վճարովի, իսկ 27%-ն անվճար հիմունքներով:

Հիմնականում վճարովի համակարգում սովորողների՝ հանրապետական միջինն էականորեն գերազանցող տեսակարար կշռի հետևանքով ՀՊՏՀ-ն գործառնական և ոչ գործառնական գործունեությունից ձևավորված եկամուտների մեջ պետական ֆինանսավորման ամենացածր տեսակարար կշիռն ունեցող պետական բարձրագույն ուսումնական հաստատություններից է (2017 թվականին կազմել է շուրջ 11%):

2016-2017 ուսումնական տարում պետական և ոչ պետական բուհերի հիմնական հաստիքային աշխատակիցների թիվը կազմել է 18983: ՀՊՏՀ հիմնական հաստիքային պրոֆեսորադասախոսական անձնակազմի թիվը 2018 թվականի դրությամբ կազմել է 344: ՀՊՏՀ-ում համատեղության հիմունքներով դասավանդել են 83, իսկ ժամավճարի հիմունքներով 22 դասախոսներ: ՀՊՏՀ-ին բաժին է ընկել ՀՀ բուհերի հիմնական հաստիքային աշխատակիցների 3.3%-ը, հիմնական հաստիքային դասավանդող անձնակազմի շուրջ 5%-ը:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում տնտեսագիտության բնագավառի հիմնական հաստիքային դասախոսների տեսակարար կշիռը ՀՀ բոլոր բուհերի տնտեսագիտության բնագավառի հիմնական հաստիքային դասախոսների թվում կազմում է 36%: ՀՊՏՀ-ում են դասավանդում տնտեսագիտության բնագավառում գիտությունների դոկտորի աստիճան ունեցողների 65%-ը, գիտությունների թեկնածուի աստիճան ունեցողների 56%-ը, պրոֆեսորի կոչում ունեցողների 57%-ը և դոցենտի կոչում ունեցողների 66%-ը:

ՀՊՏՀ հիմնական հաստիքային դասախոսներից 32%-ի տարիքը չի գերազանցում 40 տարեկանը, 24%-ի տարիքը գտնվում է 41-55 միջակայքում, 9%-ինը՝ 56-60 միջակայքում, 14%-ինը՝ 61-65 միջակայքում, իսկ 21%-ի տարիքը գերազանցում է 66 տարեկանը[14]:

Ուսանողներ հիմնական հաստիքային աշխատողներ հարաբերակցությունը ՀՀ բուհերում կազմել է 1 հաստիքային աշխատակցին 4.3 ուսանող, ՀՊՏՀ-ում՝ 1 հաստիքային աշխատակցին 11 ուսանող: Ուսանողներ/հիմնական հաստիքային դասավանդող անձ-

[14] Մանրամասն տես Հավելված 13-ում

նակազմ հարաբերակցությունը ՀՀ բուհերում կազմել է 1 հիմնական հաստիքային դասախոսին 11 ուսանող, ՀՊՏՀ-ում՝ 1 հիմնական հաստիքային դասախոսին 18 ուսանող:

Ուսանողներ/հիմնական հաստիքային դասախոսներ հարաբերակցության տեսանկյունից ՀՊՏՀ ցուցանիշը առավել մոտ է ՏՀԶԿ երկրներում նույն հարաբերակցության միջին ցուցանիշ ունեցող երկրներին[15]:

ՀՊՏՀ-ում հիմնական հաստիքային դասախոսի միջին անվանական աշխատավարձը կազմում է 285.000 դրամ, ինչը շուրջ 2.3 անգամ բարձր է ՀՀ կրթության ոլորտում միջին անվանական աշխատավարձի ցուցանիշից (120.000 դրամ):

2.3. Բարձրագույն կրթության ոլորտում դիմորդների մասնագիտական կողմնորոշման վերափոխումները. «տնտեսագիտություն», «գործարարություն և վարչարարություն» մասնագիտությունների անկումը

2016-2017 ուսումնական տարում Հայաստանի Հանրապետությունում գործող 63 բուհերը, 12 մասնաճյուղերը և 4 գիտական հաստատությունները բարձրագույն կրթության առաջին և երկրորդ աստիճանում միասին վերցրած իրականացրել են շուրջ 150 մասնագիտությունների և մասնագիտացումների կրթական ծրագրեր: Ըստ բարձրագույն կրթության մասնագիտությունների խոշորացված խմբերի՝ տվյալ 150 կրթական ծրագրերի ուսանողների թվում հումանիտար գիտությունների մնասնագիտություններում[16] ներգրավված ուսանողների տեսակարար կշիռը կազմել է շուրջ՝ 30%, իսկ գործարարության և վարչարարության ենթաոլորտների մասնագիտություններում ներգրավված ուսանողների թիվը՝ շուրջ՝ 29%[17]:

Գործարարության և վարչարարության ենթաոլորտի մասնագիտությունների նկատմամբ առկա բարձր պահանջարկը, ըստ 2015-2017 թվականներին դիմորդների

[15] ՏՀԶԿ երկրներում կրթության 6-8-րդ մակարդակներում այդ հարաբերակցությունը 11-18 միջակայքում է: ՀՊՏՀ ցուցանիշը առավելագույնս մոտ է Ավստրիայի, Նոր Զելանդիայի, Ֆինլանդիայի, Միացյալ Թագավորության, Սլովենիայի բարձրագույն կրթության համակարգում ձևավորված հարաբերակցությանը: https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=EAG_PERS_RATIO

[16] Որոնց շարքում հաշվառվում են «տնտեսագիտություն» մասնագիտությամբ ներգրավված ուսանողները:

[17] Ներառյալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոպարենային ոլորտի մասնագիտությունները, որոնցում հաշվառվում են այս բուհի գործարարություն և վարչարարություն ենթաոլորտի մասնագիտություններում ներգրավված ուսանողները: Մանրամասն Հավելված 7:

շրջանում իրականացված հետազոտությունների արդյունքների՝ հիմնականում պայմանավորված է այս մասնագիտությունների ավանդաբար «հեղինակությամբ» (престиж) և, մասամբ, աշխատաշուկայում բարձր վարձատրվող աշխատանք գտնելու ակնկալիքով: Դրանով հանդերձ, գործարարության և վարչարարության ենթաոլորտի մասնագիտություններին բաժին է ընկնում նաև ընդունելության արդյունքներով թափուր մնացած տեղերի շուրջ 1/5-ը, թեպետ թափուր մնացած տեղերի շուրջ 74%-ը բաժին է ընկնում ոչ պետական բուհերին[18]:

Հատկանշական է, որ բարձրագույն կրթության նկատմամբ պահանջարկը 2012 թվականից սկսել է հետևողականորեն նվազել: Վերջինը, ըստ կատարված հետազոտությունների, պայմանավորված է հիմնականում հանրակրթական դպրոցում դասարանից-դասարան աշակերտների փոխադրման ցուցանիշի վատթարացումով[19], բարձրագույն կրթության վրա տնային տնտեսությունների ծախսերի և պետական հատկացումների նվազումով և, հատկապես, հանրակրթական դպրոցից ավագ դպրոց անցման խիստ ցածր ցուցանիշով: 2012 թվականի համեմատ 2017 թվականին բարձրագույն կրթության առաջին աստիճանում ուսանողների թիվը կրճատվել է 9%-ով, իսկ առաջին կուրս ընդունվածներինը՝ 17%-ով:

Նույն 2012-2017 թթ ժամանակահատվածում «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտությունների նկատմամբ պահանջարկը շուրջ 2 անգամ ավելի արագ է կրճատվել, քան բուհ ընդունվողների թվի կրճատումը: 2015 թվականից այդ ցուցանիշն ավելի է արագացել: Արդեն 2015-2016 ուս. տարում «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտություններ ընդունված ուսանողների թիվը նախորդող տարվա համեմատ շուրջ 3.3 անգամ ավելի արագ է կրճատվել քան ընդամենը բուհ ընդունվածների թիվը, իսկ 2016-2017 ուսումնական տարում այն շուրջ 14 անգամ է ավելի արագ

[18] Մանրամասն Հավելված 7:
[19] Կապված միգրացիայի հետ:

կրճատվել[20]: Նույն տեմպը պահպանվել է նաև 2017-2018 ուսումնական տարվա ընթացքում:

Այսպիսով, նախորդող 10 տարիներին դիմորդների մասնագիտական կողմնորոշման վերը նշված միտումների խորացման արդյունքում «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտությունները հիմնականում «պահանջարկվածից» վերածվել են հիմնականում «առաջարկված և թափուր մնացացած» մասնագիտությունների:

ՀՊՏՀ-ն, իբրև «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտություններով կրթական ծառայություններ մատուցման ուղղությամբ մասնագիտացված բուհ, անմասն չի մնացել դիմորդների մասնագիտական կողմնորոշման բնագավառում տեղի ունեցող վերափոխումներից: Մասնավորապես, 2017 թվականին 2012 թվականի համեմատ ՀՊՏՀ բակալավրիատ ընդունվածների թիվը կրճատվել է 24%-ով, իսկ մագիստրատուրա ընդունվածներինը՝ 27%-ով:

ՀՊՏՀ ընդունված ուսանողների թիվը 2012-2015 թվականներին ինչպես տարեկան կտրվածքով, այնպես էլ ողջ ժամանակաշրջանի համար շուրջ 1.5 անգամ պակաս տեմպերով է կրճատվել քան մասնագիտության բնագավառում պահանջարկի կրճատման ցուցանիշը: Սակայն անկման տեմպերի պահպանման հետևանքով արդեն 2017-2018 թվականին մինչ այդ թափուր տեղ չունեցող ՀՊՏՀ-ին բաժին է ընկել «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտությունների գծով թափուր մնացած տեղերի շուրջ 6%-ը: Մինչ 2017 թվականը ՀՊՏՀ-ն չի զգացել դիմորդների մասնագիտական կողմնորոշման բնագավառում ընթացող վերափոխումների ազդեցությունը, քանի որ 2007-2016 թվականներին «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտությունների նկատմամբ պահանջարկի հետևողական անկումը հիմնականում «իրենց վրա են վերցրել» մասնավոր բուհերը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանը և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը:

[20] Մանրամասն Հավելված 2:

2.4. Կրթության որակից և կրթական միջավայրից բավարարվածության պատկերը ՀՊՏՀ-ում

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում ՀՊՏՀ ինքնավերլուծության արդյունքում մշակված և հաստատված «ՀՊՏՀ գործունեության բարելավման գործողությունների պլանում» մեծ տեղ է հատկացվել մասնագիտական կրթական ծրագրերի լավարկման, համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներուժի բարձրացման, համալսարանի հետազոտական ներուժի բարձրացման և հետազոտությունների արդյունքները կրթական ծրագրերում ինտեգրելու, ինչպես նաև կրթական ենթակառուցվածքները լավարկելուն ուղղված միջոցառումներին: 2014-2018թթ. ժամանակահատվածում լավարկվել են կրթական ենթակառուցվածքները, մշակվել և ներդրվել են բակալավրիական ուսուցման 6 նոր կրթական ծրագրեր, հիմնվել են հետազոտական 5 ստորաբաժանումներ:

Սրանով հանդերձ, 2014-2018 թվականների ընթացքում դասավանդողներից, դասավանդվող մոդուլներից և ՀՊՏՀ ռեսուրսներից բավարարվածության ուղղությամբ իրականացված հարցումների արդյունքները փաստում են, որ կրթական ենթակառուցվածքներից ուսանողների բավարարվածության աստիճանն էականորեն գերազանցում է կրթության որակից ուսանողների բավարարվածության աստիճանին: Ընդ որում, ուսանողների չբավարարվածության աստիճանն աճում է ներքևից վերև ուղղությամբ: Բակալավրիատի ավարտական կուրսերի ուսանողների բավարարվածությունն էականորեն ցածր է 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների բավարարվածությունից: Իսկ մագիստրատուրայի ուսանողների շրջանում կրթության որակից և դասավանդվող մոդուլներից բավարարվածությունն էականորեն ցածր է քան բակալավրիատի ուսանողներինը:

Ուսանողների կրթության որակից չբավարարվածության հիմնական պատճառներն են.

- կրթական ծրագրին, դասընթացի ծրագրին ուսանողներին պատշաճ կերպով չծանոթացնելը,
- դասավանդման ընթացքում նյութը թելադրելու պրակտիկան,
- դասավանդման և գնահատման մեթոդների անհամապատասխանությունը,

- դասավանդողի կողմից ընտրված գնահատման սկզբունքներին ուսանողներին պատշաճ կերպով չծանոթացնելը (արդյունքում գնահատման սկզբունքի արդարացիության նկատմամբ ուսանողների անվստահությունը),
- դասավանդողների որոշ մասի ոչ բավարար մասնագիտական ունակությունները (դասընթացի առարկայական շրջանակին չտիրապետելը):
- դասավանդողների կողմից կուրսը կառավարելուն նպաստող դասավանդման մեթոդներին չտիրապետելը,
- անհատական աշխատանքների ձևական բնույթ կրելը,
- ուսանողներին տրամադրվող ուսումնառության նյութերի հնացած լինելը,
- միմյանց կրկնող դասընթացների մեծ թիվը (հատկապես բակալավրիական կուրսը մագիստրատուրայում կրկնող դասընթացների մեծ թիվը),
- դասընթացների հիմնականում տեսական բնույթ կրելը (ընդ որում. նաև այնպիսի դասընթացների, որոնք կրթական ծրագրերում ի սկզբանե ներառված են եղել դրանց կիրառականությունը մեծացնելու նկատառումներով)[21]:

2.5. Բարձրագույն կրթության պահանջարկի միտումները և ապագայի կանխատեսումները

2018-2028թթ. ժամանակահատվածում բարձրագույն կրթության նկատմամբ պահանջարկի անկման միտումը կշարունակվի: Այսպես, եթե հանրակրթական դպրոցից ավագ դպրոց անցումը շարունակի մնալ նույն տիրույթում և պահպանվեն վերջին 10 տարիներին միգրացիայի, ծնելիության ու մանկամահացության ներկայիս ցուցանիշների միտումները, ապա 2018-2028 թթ. ընթացքում դպրոցի շրջանավարտների թիվը կտատանվի 18-23 հազարի միջակայքում: Իսկ եթե պահպանվի վերջին հինգ տարիների միտումը, ապա շրջանավարտների թիվը կտատանվի 17-18 հազարի միջակայքում: Ավագ դպրոցում որակական ճեղքում արձանագրելու և ընդգրկվածության ցուցանիշի

[21] Հարցվողները հնարավորություն են ունեցել մատնանշելու բոլոր տարբերակները, ամփոփման ընթացքում առանձնացվել և իբրև հիմնախնդիր առաջադրվել են հարցվողների 25% և ավելիի պատասխաններում հանդիպած տարբերակները:

զգալի բարելավման պարագայում միայն հնարավոր կլինի հասնել 24-33 հազար շրջանավարտի միջակայք, եթե հնարավոր լինի կրճատել նաև միգրացիայի ներկայիս տեմպը և բարելավել ծնելիությունը, ինչը թերևս բարդ իրագործելի սցենար է: Ըստ այդմ, առավել իրատեսական է, որ ավագ դպրոցի շրջանավարտները կտատանվեն 18-20 հազարի միջակայքում[22]:

Այսպիսով, «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտությունների նկատմամբ պահանջարկի անկման միտման պահպանման համապատկերին հաջորդող 10 տարիներին պահանջարկը կտատանվի 1450-4200-ի միջակայքում: Ընդ որում, 4200 ընդունվող հնարավոր կլինի արձանագրել 2028-2029 թվականներին և բացառապես այն դեպքում, եթե դպրոցի շրջանավարտների թիվը դիտարկվի նույն թվականի համար առավել լավատեսական (սակայն ոչ իրատեսական) սցենարով: Առավել իրատեսական է, որ հաջորդող 10 տարիներին «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտություններով բուհ կնդունվեն միջինում 2500-2700 ուսանողներ[23]:

Այս միտումների պահպանման դեպքում ՀՊՏՀ ընդունվողների միջին թիվը հաջորդող 10 տարիներին կտատանվի 680-1880-ի միջակայքում: Ընդ որում, 1880 ընդունվող հնարավոր կլինի արձանագրել 2028-2029 թվականներին և բացառապես այն դեպքում, եթե դպրոցի շրջանավարտների և «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտություններով բուհ ընդունվողների թվերը միաժամանակ դիտարկվեն նույն թվականի համար առավել լավատեսական (սակայն ոչ իրատեսական) սցենարով: Առավել իրատեսական է, որ հաջորդող 10 տարիներին

[22] Դպրոցի շրջանավարտների կանխատեսման սցենարները և դրանց մեկնաբանությունները բերված են Հավելված 8-ում:

[23] «Տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» մասնագիտություններով բուհ ընդունվողների կանխատեսման սցենարները և դրանց մեկնաբանությունները բերված են Հավելված 9-ում:

«տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտություններով ՀՊՏՀ կնդունվեն միջինում 749-925 ուսանողներ[24]:

Հարկ է նշել, որ կանխատեսման սցենարները դիտարկված են բացառապես ներկայիս կարգավորումների շրջանակներում, երբ բակալավր ընդունվում են ինչպես առկա, այնպես էլ հեռակա կրթաձևերով: Այդ տրամաբանությամբ բարձրագույն կրթության առաջին աստիճան ընդունվողների թվում ներառված են ինչպես առկա, այնպես էլ հեռակա կրթաձևերով ընդունվողների ցուցանիշները: Սակայն «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսված է բացառել հեռակա կրթաձևը բարձրագույն կրթության երկու աստիճաններում: 2012-2017 թվականներին բարձրագույն կրթության առաջին աստիճան ընդունվողների թվում հեռակա կրթաձևով ընդունվածների տեսակարար կշիռը տատանվել է 35-40%-ի միջակայքում (2017-ին՝ 39%): ՀՊՏՀ-ում հեռակա կրթաձևում սովորում են բոլոր ուսանողների 32%-ը: Օրենքի ընդունման պարագայում կանխատեսված ցուցանիշները պակաս կլինեն շուրջ 20-25%-ով:

Օրենքի գործողության 5-րդ տարվանից սկսած (երբ ավարտած կլինեն 2018-2019 ուսումնական տարում հեռակա կրթաձև ընտրած ուսանողները)՝ հաշվի առնելով դպրոցների շրջանավարտների և «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտություններով ընդունվողների կանխատեսման սցենարները, ՀՊՏՀ-ում ուսանողների թիվը բոլոր կրթաձևերում ներկայիս 6872-ի փոխարեն կտատանվի 4000-4800 ուսանողի միջակայքում կամ ներկա ցուցանիշից պակաս կլինի 29-41%-ով:

[24] «Տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» մասնագիտություններով բուի ընդունվողների կանխատեսման սցենարները և դրանց մեկնաբանությունները բերված են Հավելված 9-ում:

2.6. *Բարձրագույն կրթության առաջին աստիճանից երկրորդ աստիճան անցման պրակտիկան ՀՊՏՀ-ում՝ ըստ առանձին մասնագիտությունների*

2014-2017 թվականներին ՀՊՏՀ բակալավրիատից մագիստրատուրա անցման պրակտիկան ենթարկվել է էական փոփոխությունների, ինչպես առանձին կրթաձևերի, այնպես էլ առանձին մասնագիտությունների կտրվածով, թեպետ բակալավրիատից մագիստրատուրա անցման միջին բուհական ցուցանիշը տատանվել է 29-30%-ի միջակայքում:

Առաջին լուրջ փոփոխությունը կապված է հեռակա մագիստրատուրայի գրավչության անկմամբ: Առկա բակալավրիատից հեռակա մագիստրատուրա անցման միջին ցուցանիշը 2017 թվականին կազմել է 28%, 2014 թվականի 48%-ի համեմատ: Նույն ժամանակամիջոցում առկա բակալավրիատից առկա մագիստրատուրա անցման ցուցանիշը կազմել է 39%՝ 2014-ի 35%-ի դիմաց[25]: Այս միտումը հանգեցրել է նրան որ 2017 թվականին ՀՊՏՀ հեռակա մագիստրատուրա է ընդունվել 207 ուսանող՝ 2014 թվականի 381-ի դիմաց (շուրջ 45%-ով կրճատում):

ՀՊՏՀ բակալավրիատից մագիստրատուրա անցման պրակտիկայում նույն մասնագիտության կրթական ծրագրի անցումը տատանվել է 55-57%-ի, իսկ ՀՊՏՀ այլ մասնագիտությունների կրթական ծրագրերին անցումը 43-45%-ի միջակայքում:

Տարբեր մասնագիտությունների շրջանավարտների մագիստրատուրա անցման ցուցանիշի վերլուծությունից և ձևավորված մագիստրոսական կուրսերի կառուցվածքի հետ համադրումից ակնհայտ է, որ ՀՊՏՀ-ում ձևավորվել են հիմնականում ՀՊՏՀ այլ մասնագիտությունները «սնող» բակալավրիական մասնագիտություններ[26], հիմնականում սեփական շրջանավարտներով համալրվող մասնագիտություններ[27], ընդգծված ար-

[25] Հավելված 12:

[26] Բնօգտագործման տնտեսագիտություն, տնտեսագիտության տեսություն, հողագույքային հարաբերություններ, զբոսաշրջության կառավարում, պետական և մունիցիպալ կառավարում, ապրանքագիտություն, վիճակագրություն և մաթեմատիկական մեթոդները տնտեսագիտության մեջ: Հավելված 12:

[27] Մակրոտնտեսագիտություն, բանկային գործ, մաքսային գործ, աուդիտ, հաշվապահական հաշվառում, հակաճգնաժամային կառավարում, զբոսաշրջության կառավարում:

տաքին համալրմամբ ձևավորվող մասնագիտություններ[28] և հիմնականում այլ բուհերից համալրվող մասնագիտություններ[29]:

2014-2017 թվականների ընթացքում տեղի է ունեցել նաև ձևավորված մագիստրոսական մասնագիտացումների կրթական խմբերի թվի նվազում: Ֆինանսների ֆակուլտետում 2014-2015 ուսումնական տարվա 11 մասնագիտացման խմբերի փոխարեն 2017-2018 ուսումնական տարում ձևավորվել են 6 մասնագիտացումների խմբեր, կառավարման ֆակուլտետում 10 մասնագիտացման խմբի փոխարեն՝ 6-ը, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետում 6-ի փոխարեն 3-ը, ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետում 4-ի փոխարեն 1-ը: Հաշվապահական հաշվառման և աուդիտի, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետում թիվը մնացել է անփոփոխ, սակայն վերջինում այն տեղի է ունեցել փակված մասնագիտացումների փոխարեն նոր մասնագիտացումների ծրագրեր ներդնելու հաշվին:

Մի շարք մասնագիտությունների ներքին համալրման ցածր ցուցանիշը փաստում է, որ բակալավրիական կրթության աստիճանում կրթական ծրագրերի թվի կրճատումը էական տեղաշարժեր է ձևավորելու ՀՊՏՀ մագիստրատուրայի կառուցվածքում արդեն 3 տարի հետո, ինչը հանգեցնելու է մի շարք մասնագիտացումների ներքին համալրման անհնարինությանը, հետևաբար նաև փակմանը:

2.7 Գիտություն-կրթություն-տնտեսություն համագործակցությունը և միջազգայնացումը ՀՊՏՀ-ում

2012-2017 թվականներին ՀՊՏՀ գիտական հետազոտությունների և մշակումների ուղղությամբ պետական ֆինանսավորման ծավալը (դրամաշնորհների և պետական գնումների ձևով), միջազգային ծրագրերից ներգրավված միջոցները և մասնավոր հատ-

[28] Հանրային ֆինանսներ, միջազգային արժութաֆինանսական հարաբերություններ, շուկայաբանության մասնագիտացումներ, գործարար վարչարարություն: Հավելված 11:

[29] Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի մասնագիտացումներ, միկրոէկոնոմիկայի և ձեռնարկությունների տնտեսագիտության ամբիոնի մասնագիտացումներ:

վածից ներգրավված պատվերները տատանվել են 80-130 մլն դրամի սահմաններում, ինչը կազմել է ՀՊՏՀ գործառնական և ոչ գործառնականն գործունեությունից ստացած եկամուտների 3-3.7%-ը:

2016 թվականին ՀՀ բուհերում ուսանած 3794 օտարերկրյա քաղաքացիներից (ներառյալ սփյուռքահայերը) ՀՊՏՀ ուսանող են եղել 108-ը (շուրջ՝ 2.9%-ը), որոնցից 98-ը եղել են սփյուռքի ներկայացուցիչ:

2015-2017 թթ. Հայաստանից շարժունությանը մասնակցած 504 ուսանողներից 69-ը (13%-ը) եղել են ՀՊՏՀ ուսանողներ, դեպի Հայաստան շարժունությանը մասնակցած 267 ուսանողներից 3-ը (1.1%-ը) այցելել են ՀՊՏՀ: 2015-2017թթ. Հայաստանից շարժունությանը մասնակցած պրոֆեսորադասախոսական անձնակազմի 509 աշխատակիցներից 50-ը (10%-ը) հանդիսացել են ՀՊՏՀ հիմնական հաստիքային պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ:

2012-2017 թվականներին տարբեր ձևաչափերով ՀՀ բուհերի կողմից միջազգային կառույցներից ներգրավված ընդհանուր 5.343.000 եվրոյի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերից ՀՊՏՀ-ն տարբեր ձևաչափերով ներգրավված է եղել Եվրոպական Միության Տեմպուսի «ԱՐԱՐԱՏ», «ՄԱՀԱԹՄԱ», «ՀԵՆ-ԳԻՐ», «ՎԵՐԻՏԱՍ», «ԳՈՎԵՐՆ», «ՓԻՓԼ», «ԷՍՊԱՔ» և Էրազմուս+ -ի «ՀԵՐԻՏԱԳ», «ՐԻՖԱՅՆ» ծրագրերում:

3. ՀՊՏՀ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԿԱ ՄՈԴԵԼԻ ԱՊԱՀՈՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԽՈՉԵԼԻ ԿՈՂՄԵՐԸ

3.1. ՀՊՏՀ ձեռքբերումները և համեմատական առավելությունները

- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը բարձրագույն կրթական ծառայությունների շուկայի նշանակալի մասնակից է, որը գերակա դիրքեր ունի բարձրագույն կրթության «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտությունների հատվածում:
- ՀՊՏՀ-ն «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտությունների բնագավառում դասավանդողների առաջատար գործատուն է:
- ՀՊՏՀ-ում դիմորդների ներգրավման ցուցանիշը ավելի դանդաղ է կրճատվում, քան բարձրագույն կրթության «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտությունների դիմորդների թվի կրճատումը:
- ՀՊՏՀ-ն ինչպես ուսանող/հիմնական դասավանդողներ, այնպես էլ ուսանող/հիմնական աշխատակազմ ցուցանիշի տեսանկյունից ունի ավելի օպտիմալ հարաբերակցություն, քան ՀՀ բարձրագույն կրթական հաստատությունների միջին ցուցանիշն է:

3.2. ՀՊՏՀ բացթողումները

- Ունենալով դեպի դուրս ուսանողների շարժունակության զգալի աշխուժություն, ՀՊՏՀ-ն դրսից շարժունակության ներգրավման տեսանկյունից հետնապահ է:
- ՀՊՏՀ-ն աննշան տեսակարար կշիռ ունի նաև ՀՀ բարձրագույն կրթական համակարգում ներգրավված օտարերկրյա ուսանողների թվում:
- Լինելով «տնտեսագիտության», «գործարարության և վարչարարության» ենթաոլորտների մասնագիտությունների բնագավառում գիտական աստիճան ունեցողների 50%-ից ավելիի գործատուն՝ ՀՊՏՀ-ն գրեթե մասնակցություն չունի խորհրդատվական ծառայությունների, մարքեթինգային ծառայությունների, հաշ-

վապահական և աուդիտորական ծառայությունների, թրեյնինգի ծառայություննե-րի շուկաներում:

- Բարձրագույն կրթության երեք մակարդակներում իրականացնելով կրթական ծրագրեր, ՀՊՏՀ-ում բավականին դանդաղ է ընթանում կադրերի երիտասարդա-ցումը: ՀՊՏՀ հիմնական դասավանդողների ընդամենը 32%-ի տարիքը չի գերա-զանցում 40 տարեկանը: Դրան հակառակ դասավանդողների 14%-ի տարիքը գտնվում է 61-65 տարեկան միջակայքում, իսկ 21%-ի տարիքը գերազանցում է 66 տարեկանը:
- Սեփական միջոցների շուրջ 3%-ը նպատակաուղղելով հետազոտությունների ֆի-նանսավորմանը՝ ՀՊՏՀ-ն շոշափելի առաջընթաց չի ապահովել ինչպես տնտեսա-կան օրակարգի ձևավորման քննարկումներում, կառավարության տնտեսական բլոկի հետ համագործակցության բնագավառում, այնպես էլ մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի տեսանելի ավելացման և սեփական հետազոտությունների արդյունքները կրթական գործընթացին լիարժեք ինտեգրելու հարցում::
- ՀՊՏՀ գործառնական և ոչ գործառնական եկամուտների 82-85%-ը ձևավորվում են բացառապես ուսանողական վարձերի հաշվին, ինչի պարագայում բուհը գեր-զգայուն է դարձել ուսանողների թվի փոփոխության նկատմամբ:

3.3. ՀՊՏՀ առջև ծառացած նոր մարտահրավերները

- 2018-2022 թվականներին բարձրագույն կրթության համակարգում ընթացող փո-փոխությունների և մասնագիտական կողմնորոշման վերափոխումների արդյուն-քում ՀՊՏՀ ուսանողների թիվը կկրճատվի 29-41%-ով:
- Բակալավրիական կրթության ծրագրերի խոշորացման արդյունքում ՀՊՏՀ մի շարք ամբիոնների սպասարկած ծանրաբեռնվածության ծավալը կկրճատվի 45-65%-ով:
- Բակալավրիական կրթության ծրագրերի խոշորացման և բակալավրիատի ուսա-նողների թվի կրճատման հետևանքով անգամ բակալավրիատից մագիստրատուրա

անցման ցուցանիշի պահպանման պարագայում մի շարք ամբիոնների սպասարկած մագիստրոսական կրթական ծրագրերին ներգրավված ուսանողների թիվը կկրճատվի շուրջ 30%-ով՝ հանգեցնելով որոշ ծրագրերի փակման, իսկ որոշների թերծանրաբեռնվածության:

- Ուսանողների ներգրավման առկա միտման պահպանման դեպքում, անձնակազմի համալրվածության գործող ցուցանիշի, առկա վարչական կառուցվածքի և աշխատավարձի դրույքաչափի պահպանման պարագայում ՀՊՏՀ-ն ստիպված կլինի 1 հաստիքը կիսել 1-ից ավելի աշխատակիցների միջև: Արդյունքում իրական աշխատավարձը ՀՊՏՀ-ում կկրճատվի 40-50%-ով:

3.4. Խնդրի լուծման ուղիները

- Սեփական շուկայական հատվածում դիրքերի ամրապնդման նպատակով էականորեն բարելավել կրթական ծրագրերի որակը:
- Մշակել մրցակից բուհերի կրթական ծրագրերից բնորոշիչ տարբերակմամբ ծրագրեր՝ շեշտադրելով կրթական ծրագրերի կիրառական և հետազոտական բաղադրիչների տեսակարար կշիռների ավելացումը:
- Որակյալ կրթության պահանջ ունեցող նոր ուսանողների ներգրավման ավելացման նպատակով մուտք գործել բարձրագույն կրթության այլ մասնագիտությունների (հատկապես միջոլորտային) բնագավառներ:
- Մշակել ՀՀ և արտերկրի բուհերի հետ իրականացվող համատեղ, հիմնականում միջոլորտային կրթական ծրագրեր՝ փորձելով ուսանողներ ներգրավել բարձրագույն կրթության տարբեր ոլորտների հետ հատման տիրույթում:
- Ուսանողին ընձեռել ուսման տևողությունը, կրթական մոդուլով ապահովվող վերջնարդյունքին նպաստող դասընթացները, իսկ հետագայում նաև դասավանդողին ընտրելու հնարավորություն:
- Կրթական ծրագրերում մեծացնել ուսանողների կամընտրության դրսևորման հնարավորությունը: Ընտրովի դասընթացների տեսակարար կշիռը կրթական ծրագրի ներկայիս 7,5-12,5% մակարդակից հասցնելով մինչև 25%-ի:

- Ուսանողներին կամընտրության մեծացման և անհատական կրեդիտային բեռնվածքի հնարավորության ընձեռնման նպատակով ձևավորել տեխնիկական (Էլեկտրոնային դեկանատ, ռեգիստրարներ), կադրային (մասնագիտական կողմնորոշման ստորաբաժանում), մեթոդական և իրավական հենքեր:
- Հեռակա ուսուցման կրթաձևի կորուստը փորձել փոխհատուցել հեռավար ուսուցմանն անցմամբ և այդ նպատակով ձևավորել անհրաժեշտ տեխնիկական (Moodle համակարգ) և մեթոդական ռեսուրսներ (նոր ինստիտուցիոնալ կարողություններ և մեթոդական ռեսուրսներ):
- Moodle համակարգը ծառայեցնել նաև իբրև հարթակ՝ առկա կրթաձևում դասախոս-ուսանող արտալսարանային շփման (անհատական խորհրդատվության) համար:
- Եկամուտների բազմազանեցման նպատակով մուտք գործել խորհրդատվական, հաշվապահական, մարքեթինգային և թրեյնինգի ծառայությունների, ինչպես նաև փորձագիտության և կիրառական հետազոտությունների շուկաներ:
- Ուսանողների թվի կրճատմանը զուգընթաց՝ կարևորելով երիտասարդ և կարող ուժերին պահպանելու անհրաժեշտությունը, իրականացնել կադրերի օպտիմալացում:
- Հստակ կանոնակարգել կադրերի մշտական թարմացումը:
- Ֆինանսական միջոցների տնտեսման նպատակով իրականացնել վարչական ծախսերի կրճատում՝ վարչական և ուսումնաօժանդակ հաստիքների, ինչպես նաև ոչ պրոֆիլային ակտիվների օպտիմալացման ճանապարհով:
- Սոցիալական պատասխանատվության ծրագրերի ընդլայնմամբ, հաշվետվողականության նոր սկզբունքների և կորպորատիվ մշակույթի ներդրմամբ փորձել բարձրացնել ՀՊՏՀ վարկանիշը:
- Հակակոռուպցիոն միջոցառումների (կույր գնահատում, կույր գրախոսում) և ակադեմիական ազնվությանը նպաստող գործիքների (հակագրագողության համակարգ) ներդրմամբ համալսարանում անշրջելի դարձնել բացառապես «գիտելիքի միջնորդությամբ» գնահատվելու մոտեցումը:

4. 2018-2023 ԹԹ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

4.1. ՀՊՏՀ տեսլականն է մինչև 2025 թվականը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը դարձնել տնտեսագիտության, ժամանակակից բիզնեսի և վարչարարության ոլորտներում նորարարական և կիրառական իմացություն տրամադրող և կիրառական հետազոտություններով գիտելիք ստեղծող, պետական և մասնավոր հատվածի, ինչպես նաև հետազոտական կառույցների հետ սերտորեն համագործակցող ՀՀ առաջատար համալսարան:

4.2. ՀՊՏՀ առաքելությունն է ՀՊՏՀ-ն ակադեմիական ազատությունների և ինքնավարության, կրթություն-աշխատաշուկա համագործակցության, ուսանողակենտրոն ուսումնառության և կիրառական գիտելիքի փոխանցման, կիրառական հետազոտությունների ուղղությամբ մասնագիտական ներուժի կենտրոնացման, դասավանդման և ուսումնառության նորարարական միջավայրի ստեղծման միջոցով պատրաստում է Հայաստանի Հանրապետության և միջազգային աշխատաշուկայում մրցունակ, տնտեսագիտության, ժամանակակից բիզնեսի և վարչարարության ոլորտներում կիրառական հմտություններով և կարողություններով զինված, սոցիալական պատասխանատվությամբ և ժողովրդավարական քաղաքացիության սկզբունքներով առաջնորդվող մասնագետներ և վերապատրաստում է հասարակության և տնտեսության փոփոխությունների իրականացմանն ունակ առաջնորդներ:

Իր առաքելությունից բխող գործունեությունն իրականացնելիս ՀՊՏՀ-ն առաջնորդվում է հետևյալ արժեքներով.

- **Որակի բարձրացում**

Համալսարանը կարևրում է իր տեսլականի և առաքելության իրագործմանը միտված որակի ներքին ապահովման մշակույթի ամրապնդումը:

- **Կիրառականություն**

Համալսարանը կրթական ծառայությունների շուկայում իր կրթական ծրագրերի արդյունավետ տարբերակման նպատակով կարևորում է կիրառական վերջնարդյունքների վրա խարսխված կրթական ծրագրերի և հասցեական շահառուների պահանջմունքների բավարարմանը միտված կիրառական հետազոտությունների իրականացումը:

- **Ակադեմիական ազատություններ**

Համալսարանը կարևորում է ակադեմիական քննարկումների, խոսքի, ուսումնառության, ինչպես նաև դասավանդման ձևերի ու մեթոդների ազատությունը, խրախուսում է գիտելիքի ազատ և անկաշկանդ փոխանցումն ու ստացումը:

- **Ուսանողակենտրոն ուսումնառություն**

Համալսարանի ուշադրության կենտրոնում առաջին հերթին ուսանողի կրթական ձեռքբերումները, ուսումնառությունից նրա բավարարվածությունը և հաջողություններն են: Այդ նպատակով համալսարանը ուսանողի կարիքները հաշվի է առնում իր ակադեմիական գործունեության և օժանդակ ծառայությունների կազմակերպման, ինչպես նաև կրթական քաղաքականության ու կրթական ծրագրերի մշակման գործընթացներում:

- **Նորարարության հետևողական խրախուսում**

Համալսարանն արժևորում և խրախուսում է աշխատակիցների և ուսանողների՝ համալսարանական խնդիրների լուծմանն ուղղված նորարարական գաղափարներն ու մոտեցումները, ինչպես նաև դրանց հետագա կիրառումը և զարգացումը:

- **Գործունեության արդյունավետություն**

Համալսարանի գործունեության բոլոր բնագավառներում հատուկ նշանակություն է տրվում արդյունավետությանը, ինչպես նաև գործունեության արդյունքների որոշակիացման և չափելիության նպատակով կատարողական ցուցանիշների համակարգի ներդրմանը, որն ընդունվում է որպես գործունեության տարբեր ուղղություններով բուհի և նրա առանձին ստորաբաժանումների ձեռքբերումների գնահատման կարևորագույն չափանիշ:

- **Աշխատակիցների հմտությունների կատարելագործում և առաջխաղացում**

